

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 10-ի N 835 - Ն որոշման

«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԴԻՏԱՑԱՆՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո 1991 թվականին ստեղծվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը (ՄՊԱԾ), որը կարճ ժամանակամիջոցում հասավ բարձր նվաճումների: Ստեղծվեց ՄՊԱԾ-ի 150 կայանից կազմված բազմապարամետր դիտարկումների ազգային ցանցը, ծառայությունն ինտեգրվեց համարյա բոլոր միջազգային կառույցներում, արժանացավ Միացյալ ազգերի կազմակերպության աղետների դեմ պայքարի Սասակավայի մրցանակին, ճանաչվեց Անատոլիա-Կովկաս-Իրան տարածաշրջանի առաջատարը: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը զիջում է տարածաշրջանային առաջատարի դերը՝ դիտարկումների ցանցի սարքավորումների՝ բարոյապես և ֆիզիկապես մաշվածության պատճառով:

2. Ծրագրի նպատակը ՄՊԱԾ գործակալության ազգային դիտացանցի գործող կայանների վերազինումն է նոր սարքավորումներով՝ ստեղծելով միջազգային ժամանակակից չափանիշներին համապատասխան ազգային դիտացանց:

3. Ներկայացվող ծրագրի հիմնական խնդիրներն են՝

1) ազգային դիտացանցի արդիականացումը, որի նպատակը գործող կայանների չափիչ սարքերի, տեղեկատվության գրանցման և հաղորդման տեխնիկական միջոցների փոխարինումն է նոր ժամանակակից սարքերով:

2) ազգային դիտացանցի զարգացումը, որը ներառում է գործող կայաններում նոր պարամետրերի գրանցումը, չափվող տարբեր պարամետրերի հուսալիության և ճշտության բարձրացումը, թվային տվյալների ստացումը:

3) ազգային դիտացանցի սարքավորումները սնուցող էլեկտրական հիմնային կուտակիչների փոխարինումը նորերով:

II. ՈԼՈՐՏԻ (ՀԱՄԱԿԱՐԳԻ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

4. 2010-2011 թվականներին ոլորտի զարգացման միտումներն ակնհայտ են, քանի որ առկա է որոշակի առաջընթաց՝ բոլոր ուղղություններով: Հատկապես կարևորում ենք աշխատանքները սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ, Երևան, Գյումրի, Վանաձոր և այլ քաղաքների տարածքների սեյսմիկ ռիսկի հիմնական բաղադրիչների գնահատումը, դիտարկումների ցանցի և սեյսմիկ վտանգի քարտեզագրման աշխատանքները: Ոլորտի զարգացման միտումները 2012-2014 թվականներին անհրաժեշտ է ուղղել դիտարկումների ցանցի արդիականացման, Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի կազմման, բնակավայրերի և կենսաապահովման գծերի սեյսմիկ ռիսկի գնահատման ու ռիսկի նվազեցման ուղղությամբ աշխատանքների կատարմանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առաջարկներ ներկայացնելուն:

5. Սեյսմիկ պաշտպանության համակարգի ներկա վիճակը ֆինանսական տեսակետից հետևյալն է՝

1) բյուջետային հատկացումները, 2010 թվականի համեմատ, 2011 թվականին աճել են 11605.4 հազ. դրամով: 2010 թվականին հատկացված գումարների 75 տոկոսը ծախսվել է որպես աշխատավարձ և սոցիալական հատկացումներ: Մնացած գումարը ծախսվել է ՊՈԱԿ-ների պահպանման համար:

2) չեն հատկացվել ֆինանսներ՝ հիմնական միջոցների, այդ թվում՝ ամենակարևորը՝ սարքավորումների ձեռքբերման համար: Այս պատճառով դիտարկումների ցանցի սեյսմաբանական, երկրաֆիզիկական, երկրաքիմիական, ռադոնաչափական և մագնիսաչափական սարքավորումների 85 տոկոսը բարոյապես և ֆիզիկապես մաշված է:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՍՄԻԿ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

6. Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի գնահատման նպատակով շորջօրյա ռեժիմով իրականացվել են դիտարկումներ ազգային դիտացանցի ավելի քան 150 կայաններում: Ապահովվել են Հայաստանի Հանրապետության տարածքի և տարածաշրջանի սեյսմիկ ռեժիմի գնահատումը, տեղի ունեցած երկրաշարժերի գրանցումը և մշակումը, համալիր տվյալների բազաների ընդլայնումը, մշակումը և օպերատիվ հաղորդագրությունների ուղարկումն ըստ հաստատված ժամանակակարգի: Կատարվել է բազմաթիվ (50-ից ավելի) չափիչ սարքերի և կապի միջոցների ընթացիկ նորոգում, դրանով իսկ ապահովելով ազգային դիտացանցի շորջօրյա հուսալի աշխատանքը: Իրականացվել են, 5 միջազգային ծրագրերի և պայմանագրերի շրջանակներում, 60-ից ավելի դիտակայանների տեխնիկական սպասարկման աշխատանքները: Ազգային դիտացանցի արդիականացման նպատակով երեք հայտ է ներկայացվել դոնոր կազմակերպություններ («Երևան քաղաքի համար վաղ ահազանգման համակարգի ստեղծումը» ուղարկվել է Գերմանիայի

երկրաբանական հետազոտությունների կենտրոն (GFZ) և ներկայացվել է Միացյալ ազգերի զարգացման ծրագրի կազմակերպություններ (UNDP), իսկ «ՄՊԱԾ-ի ազգային մոնիթորինգային դիտացանցի արդիականացման ծրագիրը» ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությունը): Ազգային դիտացանցի կայանները, չնայած սակա դժվարություններին և անընդհատ նորոգումներին, աշխատել են բավարար, սակայն դիտարկումների ցանցի զարգացման և կայանների արդիականացման աշխատանքները, տարածաշրջանի երկրների նույնատիպ աշխատանքների համեմատ, բավարար չեն: Անհրաժեշտ է ներդրումներ կատարել կայանները նոր, ժամանակակից սարքավորումներով հագեցնելու համար:

IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՄՄԻԿ ՎՏԱՆԳԻ ԵՎ ՌԻՄԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

7. Ընդլայնվել են Հայաստանի Հանրապետության տարածքի և տարածաշրջանի ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման նպատակով սեյսմոլոգիական, երկրաֆիզիկական, երկրադինամիկական, երկրաքիմիական և այլ տվյալների բազաները, իրականացվել են դրանց մշակումը, վերլուծությունը և մեկնաբանումը: Մշակվել են ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման նոր մոտեցումներ և մեթոդներ, կազմվել են վտանգի նոր քարտեզներ: Մասնավորապես, ստեղծվել է ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման փորձագիտական նոր համակարգ, շարունակվել են տվյալների բազան լրացնելու ուղղությամբ աշխատանքները, ՄՊԱԾ-ի մասնագետների մասնակցությամբ իրականացվել է Հայկական ատոմային էլեկտրակայանի տարածքի սեյսմիկ վտանգի գնահատումը:

8. Սեյսմիկ ռիսկի ուղղությամբ կատարվել են, մասնավորապես, հետևյալ աշխատանքները. կազմվել են Հայաստանի Հանրապետության քաղաքների շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի գնահատման և կարևոր նշանակության օբյեկտների մասին տվյալների բազաներ (1500 օբյեկտ), տվյալների բազան ընդլայնվել է Երևանի բոլոր

վարչական շրջաններից և մի շարք բնակավայրերից ստացված տվյալներով (1600-ից ավելի շենքեր, շինություններ), կազմվել է Հայաստանի Հանրապետության կենսաապահովման գծերի (գազամատակարարում, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, հեռախոսային կապ, ավտոճանապարհներ և երկաթուղային գծեր) սեյսմիկ ռիսկի պիտեմատիկ քարտեզը, կատարվել են աշխատանքներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում սողանքներով և փյուզումներով արտահայտված տեղամասերի համատեղված քարտեզի ստեղծման ուղղությամբ:

Վ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

9. Միջազգային գործունեության ուղղությամբ կատարվել են, մասնավորապես, հետևյալ աշխատանքները. իրականացվել է համագործակցություն միջազգային բազմաթիվ կազմակերպությունների հետ (Ասիայի աղետների կառավարման կենտրոն (ADRC), Գեոդեզիայի և երկրաֆիզիկայի միջազգային միություն (IUGG), Ամերիկայի Միացյալ Նահանգների երկրաբանական ծառայություն (USGS), ՄԱԿ-ի աղետների կանխարգելման միջազգային ռազմավարության քարտուղարություն (UNISDR), Տնտեսական և համագործակցության զարգացման կազմակերպություն (OECD), Միջուկային զենքի փորձարկման համապարփակ արգելման կազմակերպություն (CTBTO) և այլն), մասնակցություն բազմաթիվ միջազգային գիտաժողովների և սեմինարների:

ՎԻ. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. Ծրագրի հիմնական խնդիրներն են՝

1) խիստ հրատապ է սեյսմիկ, երկրաֆիզիկական, երկրաքիմիական չափիչ սարքերի փոխարինումը նորերով, քանի որ դա մեծապես կնպաստի դիտարկումների արդյունքում սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիության բարձրացմանը.

2) սեյսմիկ և այլ դիտարկումների թվային տվյալների ստացումը հնարավորություն կտա ելակետային նյութը մշակելու գոյություն ունեցող համակարգչային ծրագրերով.

3) կարևոր է երկրաֆիզիկական ու հիդրոդինամիկական դիտարկումների ավտոմատացումը, որով կբարձրանա դիտարկվող տվյալների ճշտությունը և կբացահայտվեն անտմալ դաշտերի նուրբ փոփոխությունները, որոնք սեյսմիկ վտանգի ռիսկի գնահատման տեսակետից խիստ կարևոր են.

4) սարքավորումները սնող էլեկտրական կուտակիչների փոխարինումը նորերով:

VII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

11. Նախատեսվող աշխատանքների իրականացման արժեքը 174.550 հազար դրամ է, իսկ ֆինանսատնտեսական հաշվարկը ներկայացված է NN 1, 2 և 3 աղյուսակներում:

Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ՍՊԱԾ գործակալության ազգային դիտացանցերի արդիականացման համար անհրաժեշտ սարքավորումներ՝ 2012-2014 թվականների.

NN ը/կ	Գիտակայանների ցանցերի անվանումը	Կայանների թիվը	Սարքը, սարքավորումը	Մեկ միավորի արժեքը (հազ. դրամ)	Ընդհանենը (հազ. դրամ)	Ժամանակացույց	Նշումներ
1.	Տարածաշրջանային սեյսմիկ կայան (Գորիս, Վարդենիս, Ստեփանավան, Գյումրի, Իջևան, Բավրա, Արարատ, Քաջարան, Ստեփանակերտ, Երևան)	10	թվային սեյսմիկ կայան (Կինեմետրիքս, ԱՄՆ)	2700	27000	2012	ներկայացված են միայն գործարանային գները
2.	Մագնիսաչափական կայաններ (Արթիկ, Գյուլագարակ, Սարագյուղ,	7	GSM 19 (Կանադա)	2250	15750	2012	ներկայացված են միայն

	Արուն, Խնածախ, Ստեփանակերտ, Չիվա)						գործարանային գները
3.	Հիդրոդինամիկական կայաններ (Նոյեմբերյան, Իջևան, Ագատան, Շիրակամուտ, Աշոցք, Քուչակ, Մեծամոր, Ձորաղբյուր, Գորիս, Սևան, Արտաշատ, Եղեգնաձոր, Կարճաղբյուր)	14	«Կեդր Ա 2» (Ռուսաստան)	600	8400	2012	սարքի արժեքը Ռուսաստանում
4.	Ռադոնաչափական կայաններ (Արուն, Քուչակ, Մեծամոր, Փարաքար, Դավիթաշեն, Գառնի, Եղեգնաձոր (Չիվա), Ջերմուկ, Վարդենիս, Դվին, Կարճաղբյուր, Գյումրի, Արթիկ, Ստեփանավան, Վանաձոր, Բավրա, Շիրակամուտ, Գորիս, Քաջարան, Սիսիան, Ստեփանակերտ, Հաղբուժ, Մարտակերտ, Նոյեմբերյան)	24	ՌՌԱ 01-03 (Ռուսաստան)	900	21600	2012	ներկայացված են միայն գործարանային գները
5.	Էլեկտրամագնիսաչափական կայաններ (Արթիկ, Գյումրի, Եղեգնաձոր, Քաջարան, Ջերմուկ, Հաղբուժ, Ստեփանակերտ)	13		900	11700	2013	
6.	Ստորգետնյա ջրերի անալիզի լաբորատոր սարքավորումներ (Երևանի, Գյումրու, Ստեփանակերտի, Կապանի և Սուրենավանի կենտրոնների համար)	5	տարբեր սարքեր	600	3000	2013	սարքի արժեքը Ռուսաստանում
7.	Գրունտի ուժեղ շարժումների կայաններ	12	SMACH-2	1800	21600	2013	սարքի արժեքը Շվեյցարիայում
8.	Սարքերի ներկրում, մաքսագերծում, տեղափոխում, տեղադրում (կոմունիկացիաների անցկացում)				27000	2012-2014	
9.	Դիտակայանների մասնագետների ուսուցանում				5000	2012-2014	
	Ընդամենը				141 050		

Աղյուսակ 2. Մարտկոցային տնտեսության արդիականացում 2012-2014

թթ.

NN ը/կ	Անվանումը	Քանակը	Մեկ միավորի արժեքը (հազ. դրամ)	Ընդամենը (հազ. դրամ)	Ժամանա- կացույց	Նշումներ
1.	Մարտկոց 5 HK -125	300	84	25200	2012	ներկայացված են գործարանային գները
2.	Հիմք (KOH, NaOH)	2500 կգ	0,6	1500	2012	
	Ընդամենը			26700		

Աղյուսակ 3. ՊՈԱԿ-ների դիտակայանների համար անհրաժեշտ կազմակերպչական 2012-2014 թթ.

NN ը/կ	Անվանումը	Քանակը	Մեկ միավորի արժեքը (հազ. դրամ)	Ընդամենը (հազ. դրամ)	Ժամանա- կացույց	Նշումներ
1.	Համակարգիչ P IV	20	280	5600	2013	
2.	Ռադիոհեռախոս «Kenwood THF 6A»	10	120	1200	2013	
	Ընդամենը			6800		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ